ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

26 ԱՊՐԻԼԻ 2022 թ.
№ 6 (1085)

100

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Մեծ եղեռնի մասին ճշմարտությունն ասելը ոչ այնքան մեզ է պետք, որքան աշխարհին և, թող ասածս արտառոց չթվա, նաև հենց իրենց՝ թուրքերին: Մի անգամ եղեռնի շուրջ զրուցելիս Վիլյամ Սարոյանն ասաց. «Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գերմանացիների մեծ մասը գիտակցեց և խոստովանեց իր չարագործությունը, և դա նրա հոգեպես առողջանալու նշանն էր»:

Թուրքը չխոստովանեց: Հետևապես դեռ հիվանդ, շատ հիվանդ է նացիոնալիզմով: Եվ գուցե իր իսկ արյունոտ պատմության իմացությունն օգներ, որ նա զղջումի, խոստովանության խոսք ասեր աշխարհի առաջ և դրանով իսկ առողջանար...

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ 108

Դեռ մխալու է վերքը նաիրյան...
Ու վերքի միջից թռած՝ թռչելու
Ու կանչելու է երգը նաիրյան։
Երգի թևի տակ խաղաղ շնչելու,
Կանաչելու է հերկը նաիրյան։
Եվ գգվելու է հասկերը նրա,
Մեր երազները քարերի վրա
Ասեղնագործող ձեռքը նաիրյան։
Դեռ մխալու է վերքը նաիրյան...
Առաքելու է, ինչ էլ որ լինի,
Իր ծուխն առ երկինք երդը նաիրյան
Եվ ոչ մի օրով աշխարհի երթից
Հետ չի մնալու երթը նաիրյան։
Ինչ հողմ ու հրդեհ, հրթիռ ու հյուլե,
Ամուր է հոգու բերդը նաիրյան։
Բայց ո՞րն է, ասեք, մեղքը նաիրյան,
Որ մխալու է վերքը նաիրյան։

...Հատուցումը եղեռնի՝
Երբ էլ լինի՝ կհառնի։
Իրար գրկեն պիտի ողջ
Այս ազգերն էլ մահագոչ։
Աշխարհ, դու ինձ մի նայիր,
Իմ ողջ ազգին փայփայիր։
Վախենում եմ, թե նրան
Դու պարտք մնաս... հավիտյան։

Հովհաննես Շիրազ

Մանկավարժական համալսարանի դասախոսները և ուսանողները Մեծ եղեռնի 107-րդ տարելիցի առթիվ այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ ծաղիկներ խոնարհելու անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող անմար կրակի մոտ։

ԼՐԱՀՈՍ

ՀԱՅ-ՉԵԽԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դասախոսական կազմն աշխատանքային այցով եղավ Չեխիայի Պարտուբիցեի համալսարանում: Այցը էրազմուս+ շարժունության ծրագրով էր:

ՀՊՄՀ դասախոսները մասնակցեցին տարբեր դասախոսությունների, բաց դասերի, կլոր սեղան-քննարկումների, նաև գործնական աշխատանքներ կատարեցին «Ներառական կրթությունը Հայաստանում և Չեխիայում. զուգահեռներ և համեմատականներ» գրքի մշակման ուղղությամբ:

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դասախոսները ներառական կրթության խնդիրները, մարտահրավերներն ու դրանց հնարավոր լուծումները քննարկել են հայ-չեխական գիտաժողովի ընթացքում:

Գիտաժողովին մասնակցել են նաև էրազմուս+ շարժունության եռամսյա ծրագրով Չեխիայի Պարտուբիցեի համալսարանում գտնվող հայ ուսանողները:

Համագործակցության շուրջ կողմերն առաջիկայում կաշխատեն առավել ընդլայնված ծրագրերով:

ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Խաչատուր Աբովյանի անվան № 2 դպրոցում ապրիլի 5-ին ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի դասախոս Արմեն Խաչատրյանն անցկացրեց վարպետաց դաս՝ «Լուսանկարչությունն ու համացանցը» թեմայով:

Խաչատուր Աբովյանի անվան դպրոցի կերպարվեստի ուսուցչուհի Լուսինե Ղազարյանը և հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Սուսաննա Քալանթարյանը և դասին ակտիվորեն մասնակցող աշակերտները մի շարք հարցեր ուղղեցին Արմեն Խաչատրյանին լուսանկարչության ուսուցման մասին:

Ապրիլի 6-ին իրականացվեց այցելություն Վ. Առաքելյանի անվան դպրոց: Այս անգամ դասի թեման «Լուսանկարչության դերը համացանցում» խորագրով էր:

Ուսուցիչներին և աշակերտներին ներ-

կայացվեց ամբիոնի ուսանողների և շրջանավարտների՝ Արամ Խաչատրյանի, Էռնա Պարոնյայի, Հրանուշ Վարդանյանի լուսանկարչական աշխատանքները:

Հանդիպումների ընթացքում կարևորվեց Մանկավարժական համալսարանի դերը բարձրագույն կրթության ասպարեզում:

Մեր հարցազրույցը Ֆիզիկայի, մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկան, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Դեմիրխանյանի հետ

-Պարո՛ն Դեմիրխանյան, բնագիտական բաժիններում տարեցտարի դիմորդների թվի նվազումը պայմանավորված է տարբեր հանգամանքներով: Որո՞նք են հիմնական պատճառները…

-Տարեցտարի դիմորդների նվազումը մեր հասարակության մեջ ընթացող տարբեր զարգացումների հետևանք է: Եթե հետադարձ հայացքով նայենք, Հայաստանը Խորհրդային Միության կազմի մեջ ընկալվում էր որպես մի հանրապետություն, որտեղ լավագույնս զարգացած էին բնական գիտությունները: Ամենայն հարգանքով դեպի հումանիտար գիտությունները, բայց ոչ վաղ անցյալում Հայաստանը աշխարհին ներկայանում էր բնական գիտությունների ոլորտում ունեցած ձեռքբերումներով՝ Սերգեյ Մերգելյան, Վիկտոր Համբարձումյան, Ալիխանյան եղբայրներ և այլք: Եվ երևի նաև դրա շնորհիվ էր, որ բնակչության 1000 հոգուն ընկնող արդյունաբերական համախառն արտադրանքով Հայաստանը առաջատար դիրքերում էր:

Ի՞նչ եղավ ԽՍՀՄ փլուզումից հետո: Երկրներն անկախացան, և յուրաքանչյուրն իր (որոշ դեպքերում՝ նաև պարտադրված) ուղով ընթացավ: Ինչևէ…

«Եթե չկա զարգացած կրթություն, չկա կայացած պետություն, եթե չկա զարգացած բնագիտություն, չկա ինքնիշխան ուժեղ պետություն»,-

ասում է Գագիկ Դեմիրխանյանը

Վերադառնանք կրթությանը. կա հայտնի բանաձև. եթե չկա զարգացած կրթություն, չկա կայացած պետություն: Եթե չկա զարգացած բնագիտություն, չկա ինքնիշխան ուժեղ պետություն: Գաղտնիք չէ, որ պետության իրական (շատ դեպքերում՝ որոշիչ) ուժը բնական գիտություններն են, մասնավորաբար ֆիզիկան՝ իր բոլոր ճյուղերի կիրառական դրսևորումներով արդյունաբերության, ռազմարդյունաբերության և այլ ոլորտներում:

Ակնհայտ է նաև, որ փոքր պետություններին հեշտ կառավարելու, ձեռնասուն դարձնելու արդյունավետ ուղիներից մեկը նրա կրթական համակարգը, մասնավորապես՝ բնագիտական ոլորտը փլուզելն է, այն է՝ հասարակական կրթական նոր պահանջարկի ձևավորումը՝ հնարավորինս արգելակելով բնական գիտությունների զարգացումը: Այդ նպատակին էին թերևս ուղղված բազմաթիվ դրամաշնորհները և կրթական ծրագրերը, որոնցից շատ քչերն էին վերաբերում բնական գիտություններին: Արդյունքում ձևավորվեց այն, ինչ ունենք՝ իր բոլոր հետևանքներով:

-Հանրակրթական դպրոցներում ինքնաբերաբար ֆիզիկայի դերը նվազե՞ց…

- Այո՛. անկախության տարիներից սկսած՝ հանրակրթական հաստատություններում ֆիզիկայի դերը կամաց-կամաց նվազեց, դարձավ «երկրորդական», ոչ խիստ կարևորվող առարկա: Տարօրինակ է, բայց դպրոցների ավարտական քննությունների (ստուգարքների) ցանկում առկա է ֆիզկուլտուրան, իսկ ֆիզիկան՝ ոչ:

-Իսկ ինչպիսի՞ն է մասնագետների վերաբերմունքը ստեղծված իրավիճակում:

-Մասնագետներն ի՞նչ անեն. խնդիրն այնքան է խորացել, որ տեղային լուծումներն անարդյունավետ են. անհրաժեշտ է շատ ավելի լուրջ ադմինիստրատիվ միջամտություն:

-Ի՞նչ կասեք համալսարանի մեր մասնագետների մասին:

-Այսօր էլ մենք ունենք ֆիզիկայի փայլուն մասնագետներ, որոնք արդյունավետ աշխատում են՝ համագործակցելով, այդ թվում արտերկրների գիտական խմբերի հետ: Կոնկրետ մեր փոքրաթիվ ամբիոնի համար ասեմ. ես, օրինակ, Հայ-իտալական համագործակցության ծրագրի շրջանակներում աշխատում եմ իտալացիների հետ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Էդվարդ Կոկանյանն աշխատում է ֆրանսիացիների, իտալացիների, ամերիկացիների հետ. ժամանակ առ ժամանակ մեկնում է գիտական գործուղման, բարձորակ բյուրեղներ աճեցնում այդ երկրների լաբորատորիաներում: Իհարկե, նաև գիտական հոդվածներ ենք տպագրում միջազգային լուրջ պարբերականներում: Բայց արդյունքների գերակշիռ մասը, հասկանալի պատճառներով, տնօրինում է ֆրանսիական, իտալական, ամերիկյան կողմը:

-Իսկ ինչո՞ւ Հայաստանի համար այդ բյուրեղները չեն աճեցվում. որքան գիտեմ, դրանք կարող են կիրառել ռազմարդյունաբերության մեջ և այլուր:

-Այո, հարցը տեղին է, բայց ոչ ճիշտ հացեագրված: Ես կարող եմ միայն ենթադրել, որ Հայաստանին, հավանաբար, այդ բյուրեղները պետք չեն: Հետագայում նման գործունեությունը հետաքրքիր կլինի՞ մեր երկին, թե՝ ոչ, դժվար է ասել:

Ի դեպ, նման վիճակում են նաև բնագիտության մյուս ուղղությունները: Հետաքրքիր է, օրինակ, որ Սիլիկոնյան հովտում Հայաստանից գաղթած բազմաթիվ ինժեներներ և հետազոտող մասնագետներ են աշ- ➢3

ԼՐԱՀՈՍ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ Օտար լեզուների ֆակուլտետի օտար լեզուների ուսուցման ամբիոնը ապրիլի 8-ին հանդես եկավ հետաքրքիր նախաձեռնությամբ, որը նվիրել էր հարազատ բուհի 100-ամյակին: Միջոցառմանը ներգրավել էին համալսարանի բոլոր 10 ֆակուլտետներին: Լսարանի մի անկյունում նստած՝ 21-րդ դար վերադարձած եվրոպական կրթությամբ Խաչատուր Աբովյանը հիացած ու զարմացած դիտում ու լսում էր, թե ինչպես են ուսանողները վարժ անգլերենով ներկայացնում իրենց ֆակուլտետների պատմությունը, կառուցվածքը, մասնագիտություններն ու առանձնահատկությունները, հանդես գալիս գեղարվեստական հիասքանչ կատարումներով, երգ ու պարով:

Անգլերեն լեզուն միավորել էր բոլորին. ուսանողները վարժ ու սահուն անգլերեն լեզվով հպարտությամբ ներկայացնում էին իրենց ֆակուլտետները:

Հանրապետական մրցույթում մրցանակ շահած 9-րդ դասարանի աշակերտ Ռաֆայել Ավագյանի՝ Խաչատուր Աբովյանին ուղղված նամակը ընթերցեց մայրը, ով մեր համալսարանի դասախոս է:

Մտահղացման հեղինակ, ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսորի պաշտոնակատար Անահիտ Լալաբեգյանը շնորհակալություն հայտնեց բոլոր ուսանողներին՝ միջոցառման գաղափարին աջակցելու և համատեղ ուժերով այն իրականացնելու համար:

Միջոցառմանը մասնակցում էին ֆակուլտետների դեկանները: Օտար լեզուների ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սրբուհի Լուլուկյանը և Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանն իրենց ելույթներում բարձր գնահատեցին ուսանողների մասնակցությունը, նրանց օտար լեզվի իմացությունը և հպարտությամբ ընդգծեցին, որ Մանկավարժական համալսարանը հիրավի պատրաստում է որակյալ ուսուցչական կադրեր՝ հավատարիմ իր վեհ առաքելությանը:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնը կազմակերպել էր ուսանողական գիտաժողով՝ նվիրված ՀՊՄՀ-ի հիմնադրման 100-ամյա տարելիցին:

Գիտաժողովի շրջանակներում հրատարակվեց մագիստրոսական հոդվածներից կազմված 5-րդ ժողովածուն:

Բացման խոսքում արվեստագիտության թեկ-

նածու, դոցենտ, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Սաթենիկ Մելիքյանը նշեց, որ պարբերաբար կազմակերպվող գիտաժողովների արդյունքում վերջին 5 տարիների ընթացքում 68 հոդված է հրատարակվել: Նա հույս հայտնեց, որ հետագայում գիտաժողովին կմասնակցեն ոչ միայն ամբիոնի մագիստրոսները, այլև բակալավրիատի ուսանողները:

Հոդվածագիրների կողմից ուսումնասիրվել էին մշակութային նշանակալի իրադարձությունները Հայաստանում և Սփյուռքում, իսկ որոշ հոդվածներ կրում էին քննադատական բնույթ: Գիտաժողովի մասնակիցները ներկայացրին իրենց հետազոտման թեմաները տեսանյութերի համադրմամբ:

Գիտաժողովի վերջում արվեստագիտություն դոկտոր, պրոֆեսոր, Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանն իր գոհունակությունը հայտնեց գիտաժողովի կազմակերպման առթիվ՝ ուսանողներին մաղթելով նոր հետազոտական պրպտումներ մշակույթի ասպարեզում:

ԼՐԱՀՈՍ

ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 15-ին Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում կայացավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, արվեստագիտության թեկնածու Աննա Հարությունյանի ստեղծագործությունների «Խոստովանություն» խորագրով համերգը-շնորհանդեսը:

Քնարական սիրային երգերը հեղինակային նուրբ ապրումներից ծնված մեղեդիներ էին, որ գեղեցիկ ու զգացմունքային կատարումներով ներկայացրին Մանկավարժական համալսարանի երաժշտության բաժնի ուսանողները և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա-

յի ուսանողներն ու շրջանավարտները:

2013 թվականին լույս է տեսել Աննա Հարությունյանի 15 քնարական երգերից բաղկացած ժողովածուն: Երգերի վերնագրերն արդեն իսկ հուշում էին հեղինակի տրամադրությունների ու հոգեվիճակների, հույզերի ու զգացողությունների մասին: Գրեթե բոլոր երգերի տեքստերի հեղինակը Աննա Հարությունյանն էր:

2020 թվականին էլ լույս է տեսել գործիքային պիեսների ժողովածուն, որը վերնագրվել է «Պատրանք»: Այստեղ ներառված է դաշնամուրային և անսամբլային 8 պիես, որոնք միավորված են տարբեր զգացողություններով ու ապրումներով: Գործիքավորման հեղինակը դաշնակահար, պրոֆեսոր Անահիտ Բերբերյանն է:

Համերգը եզրափակվեց հավերժի ճամփան բռնած հայ քաջորդիներին նվիրված երաժշտությամբ, որն ուղեկցվում էր Արցախի պատերազմը խորհրդանշող տեսանկարներով:

Աննա Հարությունյանի նվագակցությամբ համերգի ավարտին հնչեց «Խոստովանություն» երգը:

Պետք է հավելել, որ երգացանկն ամբողջությամբ սիրո և հրաժեշտի յուրօրինակ խոստովանություն էր, որը գրավեց ու գեղեցիկ տրամադրություն պարգևեց ունկնդիրներին՝ դասախոսներին, ուսանողներին, հյուրերին:

«Եթե չկա զարգացած կրթություն...»

➤2 խատում: Կարելի՞ էր արդյոք պայմաններ ստեղծել նրանց համար Հայաստանում, համակարգել այդ ներուժը Հայաստանի զարգացումն ուղղորդելու համար…

-Ինչպիսի՞ իրավիճակ է այսօր ֆիզիկայի ոլորտում ընդհանրապես:

-Տխուր իրավիճակ է: Ըստ էության, շատերը քաջ գիտակցում են խնդրո առարկան, բարձրաձայնում են տարբեր ամբիոններից: Իրավիճակը, ըստ իս, ֆորսմաժորային է: Հիմնական խնդիրը հանրակրթական դպրոցներում ֆիզիկայի դերի նվազեցումն է, ինչը հանգեցնում է ուսուցման որակի անկման: Դպրոցների շրջանավարտների մեծ մասը, գիտելիքների պակասի հետևանքով, չի ընտրում բնագիտական մասնագիտությունները, բուհերի բնագիտական բաժինների ուսանողների թվաքանակը խիստ նվազում է: Հարկ է նշել, որ ստեղծված մարտահրավերները ծառացել են ոչ միայն մեր, այլև մյուս բուհերի առջև. բնագիտական մասնագիտություններին հատկացված (այդ թվում, պետպատվելով հատկացված) տեղերը թափուր են մնում գրեթե բոլոր բուհերում: Զարմանալի է, 21-րդ դարում բնական գիտությունները հրապուրիչ չեն հայ երիտասարդների ճնշող մեծամասնության համար:

-Ֆորսմաժորային իրավիճակը ենթադրում է հատուկ լուծումների փնտրտուք:

Իսկ գուցե անվճար տեղերի ավելացումը ինչ-որ չափով իրավիճակը շտկի՞…

- Խնդիրը միայն ուսման վարձի չափը չէ: Կրկնում եմ, բազմաթիվ, այդ թվում անվճար տեղեր թափուր են մնում և ոչ միայն մեր բուհում: Այս տարի խնդիրը հավանաբար ավելի կբարդանա՝ կապված ընդունելության քննությունների կարգի փոփոխության հետ. բնագիտամաթեմատիկական մասնագիտություն ընտրած դիմորդը այս տարի պարտադիր պետք է հանձնի երկու քննություն (նախկինում մեկի փոխարեն): Այսպես՝ ֆիզիկայի բաժին ընդունվելու համար (անկախ ընտրած բուհից) դիմորդը պետք է հանձնի մաթեմատիկա և ֆիզիկա (կամ անգլերեն): Այս նորամուծությունը, անշուշտ, չի ավելացնի ուսանողների քանակը: Իսկապես, փաստ է, որ բազմաթիվ դպրոցներում (հատկապես մարզերում) ֆիզիկայի դասավանդումը, մեղմ ասած, պատշաճ մակարդակի վրա չէ: Չեմ կարծում, որ շրջանավարտների անգլերենի իմացությունը բարվոք է, մանավանդ, որ որոշ դպրոցներում դասավանդվում են այլ օտար լեզուներ՝ ֆրանսերեն, գերմաներեն և այլն: Դրա հետ մեկտեղ նկատենք, որ Մանկավարժական համալսարանի դիմորդների զգալի մասը մարզերից ու հեռավոր շրջաններից է, և նրանցից շատերն անապահով ընտանիքներից են և ի վիճակի չեն կրկնուսույցների մոտ մասնավոր պարապմունքների հաճախել:

-Իսկ ֆակուլտետում ի՞նչ քայլեր են արվում՝ ներկա մարտահրավերներին դիմակայելու համար:

-Մեր ֆակուլտետը որոշ քայլեր ձեռնարկել է: Այսպես, ապրիլի 18-ից կազմակերպվում են անվճար պարապմունքներ ֆիզիկայից և մաթեմատիկայից. 8 հոգի արդեն գրանցվել են: Իհարկե, այս ժամանակահատվածում ո՛չ ֆիզիկա կսովորեցնես, ո՛չ՝ մաթեմատիկա: Մեր նպատակը պարզապես թեստ լրացնելուն վարժեցնելն է՝ ապահովելով դրական գնահատականը: Սա, իհարկե, հարցի լուծում չէ, բայց հուսով եմ՝ կնպաստի մեր ֆակուլտետի մասնագիտություններում ուսանողների ավելացմանը:

Բացի այդ, նոյեմբերից սկսած՝ ֆակուլտետը կազմակերպում է ամենամսյա մրցույթ ֆիզիկա և մաթեմատիկա առարկաներից՝ դպրոցական ծրագրերի շրջանակներում: Ըստ որում, մեր բուհ ընդունված, 90 և ավելի միավորներ հավաքած առաջին կուրսեցիների ուսման վարձը կզեղչվի 50%-ով: Այս միջոցառումների մանրամասն նկարագրությունը տեղադրված է համալսարանի կայքում. դրանք տեղադրված են նաև սոցիալական ցանցերում, հաղորդագրություններ են ուղարկվել նաև դպրոցների տնօրեններին:

-Իրավիճակը նույնն է մաթեմատի՞կայի բաժնում:

-Այստեղ էլ իրավիճակն այնքան բարվոք չէ: Դիմորդների թիվը 50-ից հասավ 15-ի: Իսկ այս տարի, քանի որ մաթեմատիկայի բաժին ընդունվողներն էլ պետք է ֆիզիկա (կամ անգլերեն) հանձնեն, մաթեմատիկայի դիմորդների քանակի ավելացում դժվար է սպասել:

-Իսկ գուցե խնդիրը նաև դպրոցական ծրագրերի՞ մեջ է, որի պատճառով էլ առարկան կորցրել է գրավչությունը…

-Ո՛չ: Խնդիրը հասարակական պահանջի բացակայությունն է:

Ես, քավ լիցի, ամենևին հակված չեմ գովեգելու Խորհրդային Միության կրթական համակարգը, բայց այն ուներ շատ որոշակի նպատակ՝ դաստիարակել սովետական մարդ (hommo soveticus): Այլ հարց է, թե որքանով դա հաջողվեց:

Մեր հասարակությունը (օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով) օտարվել է կրթությունից, մասնավորապես, բնական գիտություններից՝ ֆիզիկայից, քիմիայից և այլն: Պետք է, ըստ իս, մշակված լիներ կրթության քաղաքականություն՝ շեշտադրելով դրա նպատակը և այլն, հետո նոր միայն ընդունել համապատասխան օրենքներ և կրթական մոդելներ: Մի բան պարզ է. առանց հստակ ձևակերպված կրթության քաղաքականության, ինչն ազգային գաղափարախոսության կարևորագույն բաղադրիչն է, առաջընթաց ակնկալելը միամտություն է: Իրականությունն անողոք է և նրանից խույս տալն անհնար:

Բոլոր դեպքերում մեր աչքի առաջ հասարակություններն արագ փոփոխվում են, և մեզ նման շատ երկրներ կանգնած են նմանատիպ խնդիրների առաջ:

-Իսկ ի՞նչ են անում նրանք նման դեպքերում…

-Արտասահմանյան երկրներում դպրոցները վարկանիշներ ունեն, և ըստ այդ վարկանիշների՝ շրջանավարտներն իրենց ցանկությամբ կարող են սովորել համապատասխան բուհերի որոշակի մասնագիտությունների տարբեր բաժիններում՝ առանց ընդունելության քննությունների: Ժամանակին մեզ մոտ էլ կային վարկանիշային դպրոցներ ու վարժարաններ, այդ թվում նաև մեր վարժարանը, որոնց ֆիզմաթ հոսքերի շրջանավարտները հարցազրույցի արդյունքների հիման վրա ընդունվում էին համապատասխան բաժիններ: Այդ հնարավորությունն այժմ չկա:

-Այսօր ֆակուլտետում սովորում է 509 ուսանող: Ի՞նչ կասեք ուսանողների որակական մակարդակի մասին:

-Դե իհարկե, գնալով որակն ընկնում է՝ կապված հանրակրթության որակի նվազման հետ: Բայց դրա հետ մեկտեղ ունենք ուսանողներ, որոնք աչքի են ընկնում իրենց կրթական որակներով ու գիտելիքներով: Օրինակ, ֆիզիկայի բաժնի մագիստրոս Վարդուհի Մկրտչյանը ներգրավված է Բյուրականի աստղադիտարանի գիտական խմբում և մասնակցում է գիտական ծրագրերի կատարմանը: Ունենք նաև ուսանողներ, որոնք համագործակցում են արտերկրի համալսարանների հետ:

Օգտվելով առիթից՝ նշեմ, որ ինֆորմատիայի բաժնի մագիստրոսների երեք հոգանոց խումբն այս տարի առաջին անգամ մասնակցելով IT ոլորտում միջազգային ուսանողական օլիմպիադային, որին մասնակցում էին 100-ից ավելի երկրների ուսանողներ, դուրս է եկել կիսաեզրափակիչ: Դա, իհարկե, նշանակալի ձեռքբերում է:

-Ի՞նչ կասեք Հայաստանի այսօրվա ներուժի և ֆիզիկայի ասպարեզում սերնդափոխության մասին:

- Նախ շեշտեմ, որ այսօր էլ Հայաստանում աշխատում են բարձր վարկանիշ և միջազգային ճանաչում ունեցող գիտնականներ, այդ թվում՝ ֆիզիկոսներ, և սրանք ուղղակի խոսքեր չեն. հայ ֆիզիկոսներն այսօր էլ պահանջված են: Այսօր խնդիրը ներուժ ունենալը չէ, այլ եղած ներուժը պահելն ու վերարտադրելն է՝ ապահովելով գիտնականների բնականոն ու ներդաշնակ սերնդափոխությունը: Փորձեմ ավելի կոնկրետ պատասխանել ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի օրինակով, որը ցայսօր գործող ինստիտուտների մեջ լավագույններից է: Ինստիտուտի աշխատողների մեծ մասը 60 տարեկանից բարձր է, մի մասն էլ՝ 30-35 տարեկան է, միջնամասի տարիքային խումբը գրեթե դատարկ է: Տեղի է ունենում շատ պարզ գործընթաց. երիտասարդ գիտնականները հասնում են որոշակի գիտական արդյունքի և տարբեր ծրագրերով մեկնում արտերկրներ: Արդյունքում, ավագ սերնդի բնական նվազման զուգընթաց հետզհետե կնվազի նաև մյուս խմբի թվաքանակը և, ժամանակի ընթացքում գիտական աշխատողներ այլևս չեն լինի: Սա, իհարկե, տխուր հեռանկար է, որից պետք է խուսափել, եթե ուզում ենք ունենալ հզոր ու ինքնիշխան պետություն և չվերածվել այս կամ այն պետության մեջ ծվարած, մի կերպ գոյությունը պահպանող համայնքի:

Վերջում մեկ անգամ էլ շեշտեմ. մշակույթով պահվում է համայնքը, կրթությամբ ու գիտությամբ՝ պետությունը, իսկ զարգացած բնագիտությունը ուղենշում է ուժեղ պետության կայացումը:

Հարցազրույցը՝ ՍԻԼՎԱ ԱՍՐՅԱՆԻ

ԼՐԱՀՈՍ

ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑ

Պրոֆեսոր Անուշ Եղիազարյանի նախաձեռնությամբ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկորատիվ- կիրառական արվեստի մասնագիտության ուսանողներն այցելեցին Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարան: Այցի շրջանակներում նրանք դիտեցին կանանց տոներին նվիրված գոբելենների մեկամսյա հատուկ ցուցադրությունը, որտեղ հիմնականում ներկայացված էին ստեղծագործող կանանց (Մարինա Եղիազարյան, Աստղիկ Ոսկերչյան, Մարգարիտա Փարեմուզյան…) 20-րդ դարի 80-ական թթ.-ի գոբելենները պահոցային ֆոնդից: Հիմնական ցուցադրության շրջանակներում ուսանողները ծանոթացան հայկական ժամանակա-

կից գոբելենագործության հիմնադիր Կարապետ Եղիազարյանի մեծածավալ «Զինվորական հարսանիք» ստեղծագործությանը, ինչպես նաև դիտեցին Անուշ Եղիազարյանի՝ թանգարանին նվիրաբերած «Ահազանգ» գոբելենը:

«Կանանց հրաշագործությունները ասեղով» խորագրի ներքո ուսանողները հնարավորություն ունեցան դիտելու հայկական ասեղնագործությունների, ժանյակների 300-ից ավելի նմուշներից բաղկացած հավաքածուն: Ցուցադրված հավաքածուների ճնշող մեծամասնությունն ուներ արևմտահայկական ծագում: Ուշագրավ էր նաև ձեռագործի համար նախատեսված հնագիտական գործիքների ցուցադրությունը:

ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑԻՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Մանկավարժական համալսարանի ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ էին այցելել հանրապետության տարբեր դպրոցների աշակերտներ: Աշակերտները մոտիկից ծանոթացան բուհի 100-ամյա տարեգրությանը, ֆակուլտետի կառուցվածքին ու մասնագիտություններին, այնուհետև լսեցին ֆակուլտետում դասավանդող պրոֆեսորների՝ դեկան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Էդգար Հովհաննիսյանի, հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանի, համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Խաչատուր Ստեփանյանի, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Պողոսյանի դասախոսությունները:

Ձեկուցողներն անդրադարձան Հայաստանում և Սփյուռքում հայ եկեղեցու դերին ու նշանակությանը, Ուրարտուի կազմավորմանը, պատմամշակութային ժառանգությանը և հնագիտական պեղումներին, Հայկական լեռնաշխարհին որպես հայոց բնօրրանի, Արցախյան հիմնախնդրի ծագումնաբանությունը, զարգացման ընթացքին ու ներկա իրավիճակին:

Վերջում դպրոցականներն այցելեցին Մանկավարժական համալսարանի Գիտական գրադարան և թանգարան:

ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԵՄԻ ՎՐԱ

Ապրիլի 21-ին, բուհի 100-ամյակին ընդառաջ, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության մանկավարժության ամբիոնի կազմակերպած հոբելյանական համերգը՝ դասախոսների և ուսանողների մասնակցությամբ:

Ներկաներին ողջունեցին ռեկտոր Սրբուհի Գևորգյանը և երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Սարգիս Էլբակյանը:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը համալսարանի ղեկավարության, դասախոսական և ուսանողական համակազմի անունից ողջունեց նախաձեռնությունը՝ ասելով, որ 60 տարին 100 տարվա մեջ որոշակի ժառանգություն է: Նա կարևորեց բազմավաստակ մանկավարժների՝ տարիների գործունեությունը, ընդգծեց ֆակուլտետի առանձնահատկությունը, մասնագիտական-մանկավարժական ուղղորդումները արժեքների ձևավորմանը, բարձրաճաշակ ձեռնարկների կազմակերպումը:

Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սարգիս Էլբակյանն ընդգծեց համալսարանի կազմում արդեն վեց տասնամյակ գործող Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դերակատարությունը հանրապետության հանրակրթության համար կադրերի պատրաստման գործում: 60 տարի առաջ հանրապետության դպրոցների համար կերպարվեստի և երաժշտության մասնագետների պատրաստման խնդիր դրվեց և այդ առաքելությունը լավագույնս իրականացվեց: Հրավիրվեցին հանրապետության անվանի մասնագետները: Ամբիոնի վարիչը հիշեց մշակույթի երախտավորների, մասնավորապես երաժիշտների անուններ, որոնք կանգնած էին ֆակուլտետի հիմնադրման ակունքներում: Այսօր արդեն համալսարանի պատմության էջերում իրենց ուրույն տեղն ունեն վոկալիստներ Սեդա Մարյանը, վաստակավոր արտիստներ Ռոբերտ Յավուրյանը, Ելենա Վարդանյանը, Հենրիկ Սիմոնյանը, խմբավարներ, ժողովրդական արտիստներ Էմմա Ծատուրյանը, վաստակավոր արտիստներ Մեսրոպ Մեսրոպյանը, Էդուարդ Էլբակյանը, դաշնակահարներ, վաստակավոր ուսուցիչ Յակով Զարգարյանը, Սեդա Մանգասարյանը, վաստակավոր արտիստ Կարլեն Թոփչյանը, երաժշտագետներ, արվեստի վաստակավոր գործիչ Ցիցիլյա Բրուտյանը, Մանուկ Մանուկյանը, Լորետա Աղասարյանը, կոմպոզիտորներ Էդուարդ Բաղդասարյանը, Յուրի Գևորգյանը, Ցոլակ Բեքարյանը և ուրիշներ:

Այսօր նրանց գործը շարունակում են հանրապետությունում ճանաչված մանկավարժ երաժիշտներ և կատարողներ, որոնք մեծապես աչքի են ընկնում մանկավարժական և կատարողական-ստեղծագործական գործունեությամբ:

Ներկաներն ունկնդրեցին համերգային հրաշալի կատարումներ՝ ներկա գտնվելով դասախոսների և ուսանողների համագործակցությանը բեմի վրա: Ամբիոնը հանդես եկավ երաժիշտ կատարողների, միջազգային և հանրապետական մի շարք մրցույթների դափնեկիրների իր ողջ գունապնակով՝ ունկնդիրներին հիացնելով Կոմիտասի, Արամ Խաչատրյանի, Ռոմանոս Մելիքյանի, Խաչատուր Ավետիսյանի, Առնո Բաբաջանյանի, Ստեփան Լուսիկյանի, Արմեն Սմբատյանի, Յոզեֆ Հայդնի և այլ հայտնի կոմպոզիտորների ստեղծագործությունների կատարողական բարձր արվեստով:

«ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆՆ ԻՍԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՎԵՍՏ Է»,-

ԱՍՈՒՄ Է ՍԱՄՎԵԼ ՍԵՎԱԴԱՆ

Հայաստանի նկարիչների միության սրահում ապրիլի 2-ին բացվել է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի դոցենտի պաշտոնակատար Սամվել Սևադայի «Լույս ստվերների մեջ» խորհրդանշական խորագրով լուսանկարչական աշխատանքների ցուցահանդեսը:

Լուսանկարներում Հայաստանի բնաշխարհն է, հայտնի մարդկանց դիմանկարներ, նատյուրմորտներ… Որոշ նկարներ արդեն դասական է համարում և հաճույքով ներկայացնում է ցանկացած ցուցահանդեսի՝ Հրանտ Մաթևոսյան, Շառլ Ազնավուր, Տիգրան Մանսուրյան…

Սամվել Սևադան արվեստագետ է բառի լայն իմաստով, անհատականություն, ով իր լուսանկարներում ջանում է բարձր պահել ոչ միայն գեղարվեստական մակարդակը, այլև միտքը:

«Ես տեսախցիկի գերին չեմ, նա է իմ գերին: Ես տեսախցիկով նկարում եմ՝ ինչպես վրձինով: Երբ դադարում եմ նկարելուց, բանաստեղծություններ եմ գրում: 24 ժամ ես արվեստի մեջ եմ ապրում»:

Այսպես, 24 ժամ արվեստի մեջ ու արվեստը իր ներքին պրիզմայով անցկացնող արվեստագետը սեփական ըմբռնումներն ունի կյանքի ու մարդկանց մասին, որոնք իր լուսանկարների հերոսներն են՝ բարի, ազնիվ, հավատավոր…Նրա լուսանկարներում մարդկային ճակատագրեր են և մարդկային ամենատարբեր հոգեվիճակներ, որ դիտողին տեղափոխում են տարբեր վայրեր, մոտեցնում այդ մարդկանց կենցաղին ու մտածողությանը:

Օրվա մի մասն էլ Սամվել Սևադան հատկացնում է ուսանողներին ու աշակերտներին, ուսանողներին լուսանկարչության և կերպարվեստի դասեր է տալիս, աշակերտներին սովորեցնում նկարչություն: Ուզում է, որ նրանք բոլորը մշտապես արվեստի մեջ մնան:

Ապրիլի 6-ին կերպարվեստի հերթական դասն է անցկացնում Նկարիչների միության ցուցասրահում, որտեղ ներկայացրել է տարբեր տարիների 200 լուսանկար:

Դասը կերպարվեստի մասին է, ասել է թե լուսանկարչության, գեղանկարչության, երաժշտության ու գրականության համակցում: Սամվել Սևադան ձգտում է, որ ուսանողների մեջ ձևավորվի գեղարվեստական մտածողություն. խոստովանում է՝ մեծ դժվարությամբ է հասնում դրան: Դրա համար նախ պետք է գիրք կարդան: Իսկ ուսանողները, ցավոք, գիրք չեն կարդում, հեռախոսը նախընտրում են գրքից:

«Դա ավերիչ ներգործություն ունի ուսանողների վրա և դժվարացնում է իմ աշխատանքը»,-ասում է արվեստագետը:

Նկարիչների միության սրահը մարդաշատ է՝ դասախոսներ, ուսանողներ, սովորողներ, հյուրեր: Սիրով լսում են յուրաքանչյուր լուսանկարի ու նրա հետ կապված պատմությունը, որ ներկայացնում է Սամվել Սևադան: Շատ է ուզում, որ իր արվեստի երկրպագուները հենց արվեստի տեսանկյունից նայեն այս աշխարհին ու կյանքին:

Արվեստագետը ցավով է նկատում՝ բոլորը դարձել են հեռախոսի գերին. հենց դա էլ մարդկանց հեռացնում, օտարացնում է իրարից: Երբեմն էլ նկատում է ուսանողների բացակա «ներկայությունը», ինչը տխրեցնում է իրեն:

«Ոմանց թվում է՝ եթե կարողանում են տեսախցիկը բռնել, ուրեմն կարող են նկարել: Շատ ավելի կարևոր բաներ կան՝ զգայական, մտավոր…»:

Բարձրագոչ բաների մասին չի սիրում խոսել, վստահ է՝ իր ստեղծագործությունները մարդկանց օգնում են մտածել: Սիրով է նկարում և լավ է զգում, որ մարդկանց դա դուր է գալիս, հույզեր է արթնացնում:

Եվ ահա շարունակվում է ոչ սովորական դասը ցուցասրահում, ուր պատերից նայող իր լուսանկարներն են՝ մի-մի պատմություններ հայոց չքնաղ բնաշխարհի ու այնտեղ ապրող մարդկանց մասին: Սամվել Սևադան խոսում է ընդհանրապես կերպարվեստի, գրականության, պոեզայի, երաժշտության մասին, ասում է՝ այդ բոլորը միասին դառնում են արվեստ և ուղեկցում են մարդուն, այն մարդուն, որն իր մեջ զգում է արվեստի նկատմամբ սեր, ով զգում է, որ Աստված իր մեջ արվեստի նկատմամբ սեր է դրել… Այդ ներդաշնակության մեջ շատ կարևոր է խորին ակնածանքը, սերը և նվիրվածությունը արվեստի հանդեպ. արվեստի բոլոր տեսակները կապված են իրար հետ, նրանք գնում են նույն ուղով:

Մարդու մեջ կարևորում է ներքին զգացողությունը, ներքին ռիթմը, հավասարակշռությունը:

Իր կյանքի ընթացքում շատ բան է սովորել արվեստի նվիրյալներից: Հիշում է՝ խորհրդային տարիներին սև ու սպիտակ լուսանկարներ էին անում, և դա չէր համարվում արվեստ: Այսօր նա վստահաբար ասում է՝ լուսանկարչությունն իսկական կերպարվեստ է: Թող ոչ մեկը չմտածի, որ լուսանկարչությունը գեղանկարչությունից ցածր է:

Շրջում եմ ցուցասրահում, հիանում Վարպետի լուսանկարներով, որոնք արվեստի իսկական գործեր են… Հասկանալ մարդուն, զգալ նրա ապրումներն ու հույզերը, դրանք լուսանկարի ձևով փոխանցել ուրիշներին սև ու սպիտակի կամ գույնի միջոցով, միևնույն է… Կարևորը ասելիքն է և գեղարվեստական մտածողությունը, որն այնքան շատ է ուզում փոխանցել իր ուսանողներին, որպեսզի նրանք աշխարհին ու կյանքին կարողանան նայել արվեստի դիտանկյունից:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

«Իմ հոգին զույգ հենարան ունի՝ Աստված և հայրենիք»

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողական խորհուրդը և հենակետային վարժարանը մեկնարկել են հայ առաքելական եկեղեցում ընդունված տոների և ծիսակատարությունների տոնման միջոցառումների շարք, որը կրում է վերոնշյալ խորագիրը, որի հեղինակը Գարեգին Նժդեհն է:

Միջոցառումների շարքի մեկնարկը տրվեց Ծաղկազարդի տոնակատարությամբ: Միջոցառումն իրականացվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հետ համատեղ: Իրենց մեծ ավանդն ունեցան Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը և Առնակ քահանա Հարությունյանը: Առնակ քահանա Հարությունյանը տոնակատարությունն ազդարարեց տերունական աղոթքով, այնուհետև հայտնեց իր շնորհակալական խոսքը նմանօրինակ միջոցառումներ կազմակերպելու և արժևորելու համար:

Ներկաները մեկ որպես լռությամբ հարգեցին արցախյան պատերազմում հավերժի ճամփան բռնած հայորդիների հիշատակը: Նշենք որ, միջոցառման ողջ ընթացքը հագեցած էր բազմապիսի և յուրօրինակ կատարումներով, որոնք ապահովում էին տոնի պայծառությունը: Շատերիս է հայտնի, որ ցանկացած միջոցառման անբաժան մասն է կազմում ազգային երգ ու պարը, ի դեմս «Ծովակ» ազգային երգ ու պարի համույթի, որի գեղարվեստական ղեկավարն է Գագիկ Գինոսյանը: Ուշագրավ է այն փաստը, որ բացման խոսքում ներկայացվեց տոնի խորհուրդը և ծիսակարգը, այդ ամենը ներկայացվեց թատերական ներկայացման միջոցով:

Միջոցառման վերջում նախատեսված էր ազգային պարերի ուսուցում:

Հայ առաքելական եկեղեցու մյուս բոլոր տոները ևս կնշվեն մեծ շուքով: Այս միջոցառումների շարքը միտված է յուրաքանչյուր հայի ազգային ոգու գիտակցման բարձրացմանը՝ որպես քրիստոնեական գաղափարախոսության կրողի և տարածողի:

ՀՊՄՀ Ուսանողական խորհուրդ

«Մատենադարան ունեցող ազգն առանց գրքի չի կարող»

Հումանիտար ընթերցասրահում հերթական ցուցադրությունն էր. ցուցադրվեց պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դասախոսների և շրջանավարտների՝ 113 հեղինակի և համահեղինակների 401 գիրք: Դրանք մենագրություններ էին, ուսումնական և ուսումնաօժանդակ ձեռնարկներ, գիտաժողովների ժողովածուներ, ինչպես նաև Պատմության և հասարակագիտության տարեգրքի 2015-2018 թվականներին հրատարակված 4 հատոր:

1904-ից 2022 թվականներն ընդգրկող ժամանակահատվածը ներկայացնող գրքերի մեջ ամենահին գիրքը պրոֆեսոր Լեոյի ձեռագրի իրավունքով «Հայոց պատմություն» դասագրքի 1926-27 թվականներին ապակետիպ եղանակով բազմացված 1-ին և 2-րդ մասերն էին:

Վերջին՝ ամենանոր հրատարակությունը դոկտոր, պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանի «Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման հիմնահարցը Սփիւռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ» գիրքն էր՝ հրատարակված 2021 թվականին:

Գիրքը ապրում է միայն գրադարանում՝ բացման խոսքում փաստեց գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանը:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանն իր խոսքում կարևորեց պատմագիտական աղբյուրների առկայությունը՝ ոչ միայն պատմության, այլև մանկավարժության և հոգեբանության ոլորտների համար:

Դիմելով ուսանողներին՝ նա ասաց. «Գիրքը երբեք չի վերանա մեր կյանքից, որքան էլ համացանցը, հզոր տեղեկատվական կրիչները մրցակից հանդիսանան, գրքի հետ աշխատանքը բավականաչափ խորը գործընթաց է»:

Ռեկտորը կարևորեց պատմագիտական գրքերի ցուցադրությունը բուհի 100-ամյա ժառանգության բացահայտման տեսանկյունից, «պատմություն, որը բոլորիս համար շատ պատվաբեր է»:

Ելույթ ունեցան անվանի պատմաբաններ, բուհի վերոհիշյալ ֆակուլտետի դասախոսներ: Բոլոր ելույթ ունեցողները մեծարեցին գիրքը՝ որպես պատմություն, որպես գիտելիքի աղբյուր և պատմագիտական սկզբնաղբյուր:

Ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանն ասաց. «Մանկավարժությունն այն ոլորտն է, որն անփոխարինելի է: Իսկ մանկավարժական բուհը միշտ ապրելու է, ապրելու է նաև այս գրքերի շնորհիվ: Առանց գրքի մենք չենք կարող, առավել ևս Մատենադարան ունեցող ազգն առանց գրքի չի կարող»:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը հավելեց՝ ներկայացված մեկ վահանակի միջոցով կարելի է տեսնել ֆակուլտետի ողջ գիտական գործընթացը: «Գիրքը մարդկության հիշողությունն է, մարդկության պատմությունը և ժառանգությունը»:

«Գիրքը մարդկության մեծագույն նվաճումն է,-ասաց Վանաձորի Մանկավարժական ինստիտուտի շրջանավարտ, ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի ամբիոնի վարիչ Ամատունի Վիրաբյանը,- խոսելով մագաղաթներից մինչև մերօրյա ժամանակից գրքերի մասին:

Պատմաբան Էդիկ Գևորգյանը խոսեց պատմագիտական դպրոցի և պատմագիտական աղբյուրների կարևորության մասին, Խաչատուր Ստեփանյանն էլ ասաց, որ գիրքը միայն գիտելիքի աղբյուր չէ, պետք է արժևորել նաև գիրքը ստեղծողին:

Ելույթ ունեցան պատմաբաններ Աշոտ Փիլիպոսյանը և Վանիկ Վիրաբյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Աշոտ Գալստյանը: Վ. Վիրաբյանը հորդորեց ուսանողներին՝ շատ կարդալ, որովհետև գիրքը սովորեցնում է մտածել:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Ֆելիքս Բախչինյանն էլ ուսանողների անունից բարձրաձայնեց՝ մենք բոլորս այս գրքերից քաղելու շատ բան ունենք;

ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱՆԿԱՐՆԵՐԸ ՍՈՒՐԵՆ ԱՄԻՐՅԱՆԻ ԿՏԱՎՆԵՐՈՒՄ

ՀՊՄՀ կերպարվեստի բաժնի շրջանավարտ Սուրեն Ամիրյանը, ինչպես ինքն է ասում, պեյզաժային նկարիչ է: Գեղարվեստական կրթության ֆակուլտետի սրահում հերթական շրջանավարտի ցուցահանդեսն է ներկայացված. վերջին 10 տարվա ընթացքում արված պլեներային 17 աշխատանք, որոնցում Հայաստանի գեղատեսիլ բնաշխարհն է՝ Բջնի, Ախթալա, Օձուն, Արագած, աշնան և գարնան չքնաղ պատկերներ՝ գեղարվեստական հետաքրքիր մտածողությամբ ու գունապնակով: Աչք են շոյում և առավել խոսուն են իմպրեսիոնիզմի ոճով արված նկարները:

Սուրեն Ամիրյանը ծնվել է 1954 թվականին. Երևանում: 1981 թվականին ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գեղարվեստական դաստիարակության ֆակուլտետը: Հայաստանի նկարիչների միության և ՅՈՒՆԵՍԿՕ-ի նկարիչների միջազգային միության անդամ է, մասնակցել է հանրապետական և միջազգային ցուցահանդեսների Հայաստանում, Ռուսաստանում, Հնդկաստանում, Չինաստանում Լեհաստանում, Ղազախստանում, Մերձբալթյան երկրներում և այլուր: Նրա ստեղծագործությունները գտնվում են

աշխարհի տարբեր երկրների հավաքածուներում:

Սուրեն Ամիրյանին դասավանդել են անվանի արվեստագետներ Հովհաննես Զարդարյանը, Ղուկաս Չուբարյանը, Լևոն Կոջոյանը, Սուրեն Սաֆարյանը…Ասում է՝ լավ դպրոց եմ անցել, որով իսկապես կարող եմ հպարտանալ:

Դասավանդել է դպրոցում և իրեն նախ մանկավարժ է համարում՝ կոչումով և առաքելությամբ:

Ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը Սուրեն Ամիրյանին ներկայացրեց որպես ինքնատիպ երևույթ՝ ասելով. «Մենք փորձում ենք ներկայացնել այնպիսի ինքնատիպ արվեստագետների, որոնց արվեստը կարող է գեղագիտական ճաշակ սերմանել մեր ուսանողների մեջ, որ ուսանողները կարողանա ճանաչել նկարչի թե՛ ներաշխարհը, թե՛ դասական ակադեմիական սկզբունքները»:

Նկարիչների միության նախագահ Սուրեն Սաֆարյանը երկար տարիներ ճանաչում է նկարչին, հիացած է նրա արվեստով. «Հետաքրքիր մտածող արվեստագետ է, ով իր կյանքը չի պատկերացնում առանց նկարչության և բնության»:

«Նկարիչը գույներ ու գծեր չի դնում նկարի վրա. նա իր հոգին է դնում նկարի մեջ,-ասում է Ս. Սաֆարյանն ու հավելում,-նկարներն ստեղծվում են տարբեր տրամադրությամբ, որով էլ պայմանավորված է, թե ինչ գույներ են ընտրվում ներկապնակից»:

Կերպարվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարեն Աղամյանը նկարչի բոլոր աշխատանքներում տեսնում է գունային հետաքրքիր լուծումներ ու սեր, ուսանողներին հորդորում՝ սովորել յուրաքանչյուր նկարից:

«Շնորհաշատ շրջանավարտներ» խորագրով ցուցահանդեսը շարունակաբար ներկայացվում է ֆակուլտետի սրահում՝ նպաստելով ուսանողների ոչ միայն մասնագիտական ու գեղագիտական մտածողությանը, այլև արթնացնելով սեր հայրենի բնաշխարհի հանդեպ:

Լուսանկարչությունը դպրոցում

Լուսանկարչությունն ամենուր է: Այսօր մենք չենք պատկերացնում մեր առօրյան առանց լուսանկարչության ու լուսանկարների՝ սկսած ընտանեկան ալբոմի էջերից, որտեղից մեզ նայում են հարազատ մարդկանց դեմքեր ու հուշեր արթնացնում: Յուրաքանչյուր ընտանիքի համար ալբոմները պատմական էջեր են, որտեղ հավաքված ու ներկայացված է ընտանիքի անցյալն ու ներկան: Լուսանկարը նաև շատ կարևոր միջոց է տեղեկույթ փոխանցելու համար, քանի որ բառերով նկարագրելը մի բան է, իսկ փաստը ցուցադրելը՝ մեկ այլ բան: Մենք մանկուց սովորում ենք խոսել, այնուհետև գրավոր արտահայտել մեր մտքերը, զարգացնում ենք գրավոր խոսքը դպրոցում, իսկ դրան համարժեք՝ պատկերի գրագետ մատուցման խնդիրը մնում է, մի տեսակ, նվազ բացահայտված, և չի ուսուցանվում: Ավելորդ է փաստել, որ անհատի բազմակողմանի զարգացման համար անհրաժեշտ է, որ անհատի բանավոր ու գրավոր խոսքի մշակույթը հավասարակշռի գրագետ պատկերի մատուցման մշակույթին: Այսօր պատկերի ֆիքսման ու փոխանցման միջոցները դարձել են բավական հասանելի, քանի որ ակամա մենք դառնում ենք պայմանական լուսանկարիչ: Ինչո՞ւ պայմանական. քանի, որ հասարակության լայն շրջանները չեն տիրապետում կադրի գրագետ մատուցման կանոններին: Իսկ ինչո՞ւ խոսքի արարման մշակույթի ուսուցմանը զուգահեռ հանրակրթության համակարգում չուսուցանել պատկերի արարման մշակույթը:

Մի փոքր պատմական էքսկուրս: Նախկինում, երբ չկար թվային լուսանկարչություն և բացակայում էին թվային եղանակով պատկերը հեռախոսում ֆիքսելու միջոցները, լուսանկարչությունը ժապավենի վրա էր: Նկարահանումները կատարվում էին այնպիսի խցիկներով, որոնցով լուսանկարելը պահանջում էր որոշակի մասնագիտական փորձառություն: Փաստորեն, մինչև թվային եղանակով լուսանկարելն ու լուսանկարչական հարմարանքներով հեռախոսների համալրումը, հանրության մի ստվար զանգված ներառված էր հասանելի ու մատչելի լուսանկար կատարելու պրոցեսում: Թվային լուսանկարչության ներդրմամբ այս բանակը զգալիորեն ավելացավ, քանի որ յուրաքանչյուր ոք գրպանում դրված ժամանակակից նկարահանող հեռախոսով ակամա դարձավ պատկեր ֆիքսող՝ լուսանկարահանող: Այստեղ լուրջ մտորելու առիթ կա. հեռախոսները գրպանում կարող էին բոլորովին էլ չունենային լուսանկարելու հնարավորություն, ի վերջո այդպիսին էին նրանք, երբ նոր-նոր տարածում գտավ բջջային կապը: Ու մեկ էլ մի օր այս հեռահաղորդակցման միջոցը, որը միշտ մեզ հետ է, սկսեց նկարել: Ժապավենին փոխարինեցին թվային տեխնոլոգիաները, ու նորից սկսվեց նկարահանողների թվի աճ: Նոր տեխնոլոգիաները դյուրացրին այս պրոցեսը կիրառման տեսանկյունից. այլևս պետք չէր սահմանափակ կադրերի քանակության համար ժապավեն ձեռք բերել: Կարծես մի աներևույթ ուժ մղում է, որ մարդ ֆիքսի ու փոխանցի պատկերն այնպես, ինչպես կխոսեր ու կգրեր, ընդ որում՝ նույնքան գրագետ: Սա՛ է լիարժեք անհատը: Մանկուց մենք սովորում ենք ճիշտ խոսել, այնուհետև ճիշտ գրել: Փոքր հասակում նկարում ենք ձեռքով, սակայն մեծանալով թողնում ենք շատ անհրաժեշտ այս զբաղմունքը, քանի որ գիտակցում ենք, որ չենք տիրապետում նկարչությանը:

Այսպիսով, պատկեր կերտելու օրգանական պահանջը մնում է չիրագործված՝ առաջացնելով մի տեսակ միակողմանիություն: Այստեղ օգնության է հասնում լուսանկարչությունը, որի առաքելությունը պատկերի արագ ֆիքսումն է՝ ի տարբերություն գեղանկարչության, որտեղ պատկերի ֆիքսման համար անհրաժեշտ է որոշակի ժամանակ: Ոմանք կհակադրվեն՝ ասելով, որ լուսանկարչությունն ամբողջությամբ չի փոխարինում մարդու՝ ձեռքով նկարելու օրգանական պահանջին, սակայն սա միակ հասանելի միջոցն է՝ պատկերներ ստեղծելու ու փոխանցելու հանրության լայն շրջանակներին և ի պահ տալու հետագա սերունդներին: Իհարկե լուսանկարել բոլորովին էլ չի նշանակում սեղմել կոճակը: Պատկերներ ստեղծելու արվեստին պետք է վարժվել և ոչ պակաս ջանասիրությամբ, ինչպես խոսքին: Կադրի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նկարագրությունից առավել ազդեցիկ է ու արագամարս: Լեզվի խնդիրը կադրի համար խոչընդոտ չէ, քանի որ

այն տարբեր ազգերի հետ խոսում է իրեն բնորոշ պատկերավոր եղանակով, ուստի կադրն ունի իրեն բնորոշ արտահայտչամիջոցներ, սահմաններ, ուր անհրաժեշտ է գրագետ ու ճիշտ մատուցել նյութը:

Լուսանկարչությունը տարածվեց հասարակության լայն շրջանակներում երբ յուրաքանչյուր հեռախոս համալրվեց լուսատեսանկարահանող միջոցով, հատկապես այն լայն կիրառում գտավ երիտասարդների ու դեռահասների շրջանում և անհրաժեշտ է վերջիններիս մոտ ձևավորել գրագետ ու գեղագիտական տեսանկյունից ճիշտ մոտեցում լուսանկարչության մոգության նկատմամբ՝ դասավանդելով այն դպրոցում:

Գեղարվեստական լուսանկարչության դասավանդմամբ աշակերտի մեջ կձևավորվի գեղարվեստական մոտեցում լուսանկարչության հանդեպ: Լուսանկարահանել՝ չի նշանակում պարզապես ուղղել խցիկը լուսակարահանվող նյութին ու սեղմել սեղմակոճակը, այլ մտածել յուրաքանչյուր կադր նկարահանելիս չէ՞ որ լուսանկարի արժեքն ամրապնդվում է ժամանակի մեջ:

Մի հավելում ևս: Լուսանկարահանման նրբություններին հասու դարձնելուն զուգահեռ աշակերտը պիտի սովորի որոշել դիպուկ լուսանկարի վերտառությունը, վերնագրի այն, ինչը մեծապես կնպաստի նրա գեղարվեստական մտածողության զարգացմանը, քանի որ վերնագրելու պրոցեսում աշակերտի մոտ տեսողական ընկալմանը զուգահեռ զարգանում է լեզվամտածողությունը: Աշակերտների և ուսանողների հետ աշխատանքի փորձից ելնելով՝ կարող եմ փաստել, որ վերնագրման պրոցեսում ընտրվում են լավագույն լուսանկարները, որոնք իսկապես ասելիք ունեն: Դասավանդելով լուսանկարչությունը՝ աշակերտի մեջ կձևավորենք պատասխանատվություն նկարահանած ու հրապարակած յուրաքանչյուր կադրի համար: Դասավանդման առաջին օրից աշակերտին կուսուցանենք յուրաքանչյուր լուսանկար նկարելիս, թեկուզ պատահական, չվարկաբեկել նկարահանվողներին. գրագետ լուսանկարողը էթիկայի վարվեցողության նորմերը պարտադիր պահպանում է:

Յուրաքանչյուր պետության և հասարակության համար կրթությունը հիմնարար նշանակություն ունի: Միայն սերնդեսերունդ գիտելիքների և փորձի փոխանցման եւ դրանց կատարելագործման շնորհիվ է հնարավոր կառուցել ազգային ամուր պետություն, ասել է թե՝ հասարակություն:

Արմեն ԽԱՉԱՏՐՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի ասիստենտ

ՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ. «ՄԿՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ»

Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում ներկա գտնվեցինք պրոֆեսոր Աիդա Հովհաննիսյանի բեմադրած հերթական ներկայացմանը: Աթաբեկ Խնկոյանի «Մկների ժողովը» ստեղծագործության հիման վրա ռեժիսուրայի 3-րդ կուրսի ուսանողների և Պատանեկության ստեղծագործական կենտրոնի սաների մասնակցությամբ փորձարարական աշխատանքը ավանդականի և նորարարականի համատեղում էր՝ արված մյուզիքլի ոճով: Տեղին ընտրված երաժշտական ստեղծագործությունները, իմպրովիզային տեքստերը և դեռևս պրոֆեսիոնալիզմի ճանապարհը չհատած ուսանողների հմտությունների դրսևորմամբ ու փոքրիկների պարային անվարժ, բայց անկեղծ շարժումներով ներկայացումն իսկապես հնի ու նորի կոլորիտային միախառնման հետաքրքիր միջավայր էր ստեղծել բեմի վրա:

Այո, բեմի վրա մկներին ներկայացնողը ապագա ռեժիսորներն էին, որ հետաքրքիր լուծումներով ցուցադրեցին «մկստանի» բոլորիս ծանոթ պատմությունը. վախեր ու տագնապներ, իսկ երբ գալիս է զանգ կախելու ժամանակը՝ պարզվում է, որ բոլորը սոսկ ճառ ասողներ են...

Մուտքն ավելի քան նոր էր, ավելի քան տարբեր բնագրից. «Մկների ժողովը» կարծես ինտեգրվել էր 21-րդ դարի մեջ, նոր չէր միայն գաղափարական ասելիքը, թեման, որն արդիական է բոլոր ժամանակներում՝ ավելի շատ գործ է պետք անել, քան խոսել:

Եվ այսպես, փոքրիկ «մկները» նախ բեմը լցրին պարային ռիթմիկ շարժումներով, «բեմական խոսքի ու վարպետության դասեր ներկայացրին», բողոքեցին մկստանի տաղանդավոր դերասանական կազմին դերեր չվստահելուց... Գլխավոր մուկը Չալոն էր, ում մկները Շեքսպիր կոչեցին, որի մեկ շարժումից մկներն այս ու այն կողմ էին վազում...Հասան մինչև «լինե՞լ, թե՞ չլինել»՝ հայերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն լեզուներով՝ ի ցույց դնելով իրենց տաղանդը, նաև մտածելով վաղվա օրվա մասին... «Միևնույն է՝ դեր չկա»,-ասում է գլխավոր մուկը...

Եվ հանկարծ՝ կատուն է գալիս. ամեն ինչ փոխվում է, վախից ու տագնապից մկները դողում են՝ զգում են մոտալուտ սովը: Բայց որպեսզի չկորչի մկների «ազնիվ» ցեղը՝ պիտի զանգ կախեն կատվի վզից և հասկանան

նրա մոտենալը:

Ահա այստեղ է գաղափարական բանալին՝ մկները տարբեր պատճառներով խուսանավում են զանգը կախել, որովհետև վտանգավոր է իրենց կյանքի համար, իսկ գլխավոր մուկը չի ամաչում բարձրաձայնել՝ ճա՞ռ ասեմ, թե՞ զանգ կախեմ...

Ռեժիսորական հետաքրքիր լուծում է գտնում բեմադրիչ Աիդա Արտեմովնան. գալիս է փոքրամարմին աղջնակ-կատուն, Չալոյի ձեռքից խլում զանգը և բարձրաձայնում, որ այլևս բուսակեր է....Մկները հրճվում են, բեմը վերածվում է պարահրապարակի...Նրանք դեռ չգիտեն իրենց գլխի գալիքը: Իսկ երբ հեռանում են, բացահայտվում է կատվի խորամանկությունը՝ նա խաբել է մկներին և պատրաստվում է նրանց գլխին փորձանք բերել: Այո, երբ թվում էր, թե նոր ժամանակների կատուները պիտի հաշտ լինեն մկների հետ՝ պարզվում է, որ դարը փոխվել է, իսկ պայքարը մնացել նույնը, ճառ ասողներին ժամանակն էլ չի փոխել, և երևույթը բոլոր ժամանակների համար արատավոր է:

Ինչպես ասում է ներկայացմանը ներկա գտնվող բուհի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը՝ երաժշտական ներկայացումը ստացվեց սերունդների միաբանությամբ: Մանկավարժական համալսարանի սոցիալ-մշակութային այս միջավայրում սերունդներ են կրթվում, և նրանց կապը արվեստին մոտեցնող ժամանակն է:

«Այսօրվա թատրոնը պահանջում է և՛ երաժշտություն, և՛ պլաստիկա, և ամեն ինչ...»,-ասում է Աիդա Հովհաննիսյանը, ով մշտապես ռեժիսորական համարձակ լուծումներով բեմադրություններ է ներկայացնում հանդիսատեսին:

Երիցս ճիշտ է նկատում ամբիոնի վարիչ Արմեն Էլբակյանը՝ ի տարբերություն բիզնեսի, արվեստը ներդրում է ապագայի մեջ:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ՀՊՄՀ ԱՆՎԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՏԱՐԹՈՒՆ ՏԱՐԵԳԻՐԸ

Դեր Զոր կոչվածն էր մի մեծ տեղավայր,
Մորթված հայերին էլ հաշիվ չկար,
Օսմանցի պետերը մսագործ դարձան,
Հայերն են զոհվում հավատքի համար:

Միայն այս քառատողն էր արտասանել ցեղասպանագետ Վերժինե Սվազլյանը, երբ միջոցառումներից մեկի ժամանակ թուրք պաշտոնյան կնոջ հետ ցանկություն էր հայտնել հանդիպել իր հետ ու հետաքրքրվել իր գործունեությամբ: Լսել էին, մի քանի րոպե լռել, համբուրել իրեն և հեռացել՝ անխոս ու գլխիկոր:

Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ, բանագետ, բանահավաք Վերժինե Սվազլյանն արդեն 65 տարի 8 լեզուներով աշխարհին է ներկայացրել Ցեղասպանության ականատեսների հուշերը, վկայությունները, որոնք անհերքելի փաստեր ու ապացույցներ են եղել Հայոց ցեղասպանության ճանաչման գործում: Դրանք ամփոփվել են 500-ից ավելի գիտական և հրապարակախոսական աշխատություններում, 30 գրքերում:

«Հայրս ասում էր՝ մենք սփյուռքը չտեղծեցինք, որ կառչած մնանք: Դա Թուրքիայի բռնության հետևանքն էր: Մենք ունենք մեր հայրենիքը. գնանք շենանցնենք»,-հիշում է Վերժինե Սվազլյանը:

Վերջերս հրատարակվեց նրա «Ամերիկահայ բանավոր ավանդույթը ժամանակի հոլովույթում» ստվարածավալ գիրքը (904 էջ): Այն ընդգրկում է ԱՄՆ գաղթած արևմտահայ ավագ, նաև՝ հետագա սերունդներից հեղինակի 5 ուղևորությունների ընթացքում (1979-2008 թթգ) գրի առած և կորստից փրկված պատմական, բանահյուսական և ազգագրական նյութեր: Դրանց միջոցով ներկայացվում է ԱՄՆ-ի հայության անցյալ ու ներկա կյանքի ընդհանուր պատկերը՝ սկզբից մինչև մեր օրերը, նրանց հաղթահարած դժվարություններն ու ունեցած հաջողությունները:

Հատորն օժտված է նաև անգլերեն և ռուսերեն ամփոփումներով, 206 բանասացների և նրանց հաղորդած 1.165 միավոր նյութերի Փաստագրական աղյուսակով, օտարամույծ բառերի Բառարանով, Ծանոթագրություններով, Բանասացների և նրանց հաղորդած նյութերի, Անձնանունների, Տեղանունների, էթնոանունների և այլ ցուցիչներով, Բանասացների լուսանկարներով, ինչպես նաև «Հայերի տեղաբաշխումը Ամերիկայի Միացյալ Նահանգներում» պատկերող Քարտեզով և «Ամերիկահայոց շրջանում տարածված ժողովրդական երգերի կատարումները» (41 միավոր) ներկայացնող խտասալիկով:

Գրքի խմբագիր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանի խոսքով՝ այս աշխատությունը հայ բանագիտության պատմության մեջ առաջինն է, որ նվիրված է ամերիկահայոց բանավոր ավանդույթի գիտական համակողմանի ուսումնասիրությանը, որն իր պատմաճանաչողական արժեքով հայ ժողովրդի արդի մշակույթի պատմության մեջ կարևոր և բացառիկ արժեք է ներկայացնում:

Վերժինե Սվազլյանի համար ամեն գրքի լույսընծայում մի երեխայի երկունքի է նմանգ ուժերի գերլարումից նա երկար ժամանակ վերկանագնվում է, ապա անցնում հաջորդ գրքի ծննդին: Այս գիրքը ևս բացառություն չէ. գիտնականի նպատակն էր վերականգնել կորսված հայրենիքի բանավոր ավանդույթը և այն հասցնել ընթերցողների լայն շրջանակներին:

Նա ափսոսանքով է նկատում, որ այսօր գաղափարախոսության պակաս կա, այնինչ մեծ հորեղբոր՝ Միհրան Սվազլյանի գաղափարախոսությունն իր համար արդիական է նաև այսօր՝ «Արժանապատվությունը կարևոր է, իսկ հայրենասիրությունը արժանապատվության խնդիր է ինձ համար»: Եթե դրա պակասը չլիներ, աշխարհի տարբեր վայրերում հանգրվանած հայերը կբնակվեին Արցախում և չէր լինի այն, ինչ եղավ 2020-ին:

Նա այն կարծիքին է, որ 1915-ին Ցեղասպանությունը կազմակերպել էին մեծ տերությունները, որը շարունակում են մինչ օրս. «Թուրքիան եղել և մնում է մեծ տերությունների խամաճիկը, իսկ նրա հետ սահմանի բացումը երկրորդ ցեղասպանություն է լինելու մեզ համար. այդ դասը մենք արդեն առել ենք. արհամարհված պատմությունը կկրկնվի:

Վերժինե Սվազլյանն աշխարհի տարբեր կողմերում հանգրվանած հայերի հետ է շփվել, խոստովանում է՝ հայերը եզակի ժողովուրդ են, որոնց պետք է միայն պաշտել.«Չնայած դժվարություններ, զրկանքներ ու տառապանք է տեսել, բայց հերոսաբար հաղթահարել է: Նույնիսկ այսքան զոհեր ունենալուց հետո նորից վերածնվում են: Մենք իսկապես դրախտի հողի վրա ենք ապրում, պետք է պաշտպանենք այդ հողը, ոչ թե նվիրենք թուրքին»,-նշում է Վերժինե Սվազլյանն ու կրկին հիշեցնում՝ խելքին մոտ բան չէ թուրքի հետ հաշտվելը:

Դժվարին է եղել գիտնականի ուղին: Գրքերը հրատարակելու կամ թարգմանելու համար ստիպված է եղել վաճառել ունեցվածքն ու հորից մնացած թանկ հիշողությունները, իսկ նոր նյութեր հավաքելու համար երբեմն կյանքն է վտանգել:

Պատրիարք Մեսրոպ Մութաֆյանի հրավերով Կոստանդնուպոլսում մասնակցել է գիտաժողովի, որին հաջորդել է շրջայցը Կիլիկիայով: Սուրբ Փրկիչ հիվանդանոց ներթափանցելու համար ստիպված է եղել վիրահատության դիմել. միայն այդպես է կարողացել հետնամուտքով մտնել ծերանոց և զրուցել Ցեղասպանությունը վերապրածների հետ, գրի առնել հուշեր: Անձնազոհության վառ օրինակ է նաև այն, որ Վերժինե Սվազլյանը ստիպված էր Ամերիկայի «Արարատ» ծերանոցում որպես կամավոր 15 օր աշխատել. խնամում էր ծերերին՝ հավաքելով նրանց հուշերն ու վկայությունները, բանահյուսական նյութերը: Հպարտությամբ թերթում է իր հեղինակած աշխատություններն ու թարմ հիշողությամբ թվարկում յուրաքանչյուր փաստի, նյութի հավաքման հետ կապված հուշերը:

Վերժինե Սվազլյանն 88 տարեկան է, բայց շարունակում է պահպանել Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատողի ու անխոնջ գիտնականի իր առաքելությունը: Հաջորդ աշխատությունը լինելու է արևմտահայոց թուրքալեզու բանահյուսության մասին: Թուրքալեզու երգերն առաջին անգամ նա է հավաքել. հայերը թուրքերենով են խոսել, երգել, քանի որ հայ լինելու համար Կիլիկիայի, Անատոլիայի տարբեր նահանգներում հայերեն խոսելու համար հայերի լեզուն ծայրատել են: Իրենց ապրումներն ու տառապանքները հայերն արտահայտել են թուրքալեզու երգերում.

Դպրոցը մտան, վարժուհուն բռնեցին, վա՜յ աման,
Բերանը բացեցին, լեզուն կտրեցին, ա՜խ աման …

Վերժինե Սվազլյան. Հայոց ցեղասպանության փաստերի ու վկայությունների մշտարթուն պահապան, որ կես դարից ավելի մասնիկ առ մասնիկ ժողովել է կորսված հայրենիքի մասունքները, ամբողջացրել դրանք՝ սերունդներին փոխանցելով պատմականորեն անուրանալի փաստերն ու հուշերը:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՅՑԱՀԱՆԴԵՍ

Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի գեղեցիկ սրահում այսուհետև պարբերաբար կներկայացվեն շրջանավարտների ստեղծագործությունները՝ «Շնորհաշատ շրջանավարտներ» խորագրով: Ապրիլի սկզբին առաջին անհատական ցուցադրության էր ներկայացվել ֆակուլտետի շրջանավարտ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմեն Հարությունյանի վերջին տարիների 20 գեղանկարչական աշխատանք:

Գեղեցիկ կակաչներն ու դաշտային ծաղիկները, Հայաստանի տարբեր անկյուններում՝ Շուշիում ու Ախթալայում արված գեղանկարները հիացրին այցելուներին, դասախոսներին և ուսանողներին:

Ա. Հարությունյանի պրպտուն միտքը և գեղանկարչական մտածողությունը գեղանկարների միջոցով արվեստի բարձր ճաշակ են մատուցում ուսանողների նոր սերնդին, սովորեցնում սիրել հայրենի բնաշխարհը նաև կտավի ու գույնի միջոցով: Բոլոր աշխատանքները նկարիչն արել է բնության գրկում:

Շուրջ 20 տարի Արմեն Հարությունյանն աշխատել է ՀՊՄՀ Տարրական կրթության ֆակուլտետում որպես

փոխդեկան. 25 տարի չի նկարել, զբաղվել է դասախոսական և գիտական աշխատանքով: Սեղանին դրված են նրա գիտական աշխատանքի պտուղները՝ հրատարակած գրքերը՝ ընդհուպ մինչև դոկտորական, ուր ներկայացրել է հայկական կրթօջախներում արվեստի դրվածքը, համեմատություններ արել նոր ժամանակաշրջանի հետ: Այդ գիտական աշխատանքներում համակցված են արվեստն ու մանկավարժությունը:

Այժմ աշխատում է Հյուսիսային համալսարանում. հոգեբանության և մանկավարժության ամբիոնի դոցենտ է:

Նա հիշում է ֆակուլտետի անվանի արվեստագետներին, որոնց մոտ ուսանել է: Հպարտանում է Մանկավարժական համալսարանի 100-ամյա ավանդույթներով:

«Հայաշունչ ստեղծագործություններն այսօր քիչ հանդիպող երևույթ են մեզանում»,-ասաց պրոֆեսոր Արա Հակոբյանը՝ Արմեն Լոռենցին համարելով «փառահեղ նկարիչ և գիտության ոլորտի կարկառուն ներկայացուցիչ»:

«Լոռվա արմատներն ու ցուցադրությանը ներկայացված նկարչի աշխատանքները վկայում են՝ Արմեն Հարությունյանին ստեղծագործելու շնորհն ի վերուստ է տրված»,-ասաց կերպարվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարեն Աղամյանը:

Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր Համլետ Միքայելյանն էլ խոսեց արվեստի հիմնական խնդրի մասին, որը գեղեցիկի բացահայտումն է՝ հավելելով, որ պետք չէ տարանջատել բնական գիտություններն ու արվեստի ոլորտը, որոնք այնքան «հաշտ են» իրար հետ Արմեն Հարությունյանի կտավներում:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂԻ ԷՋ

Հայկական հին ու նոր ֆիլմերը կինոթատրոններում

Հայաստանում ապրիլի 16-ը նշվեց որպես «Հայ կինոյի օր»: Դեռևս 2019 թվականին ՀՀ ԱԺ-ն ընդունեց «Հայ կինոյի օր» ունենալու մասին որոշում: Հայաստանի ազգային կենտրոնը դեռևս 2020 թվականին նախատեսել էր միջոցառումներ՝օրը նշանավորելու նպատակով, սակայն համավարակի պատճառով նախաձեռնությունը կյանքի չէր կոչվել: Այս տարի Հայաստանի ազգային կինոկենտրոնի նախաձեռնած կինոցուցադրումների արշավին միացել էին հայ ռեժիսորներն ու պրոդյուսերները: Այս տարի մայրաքաղաքի մի շարք կինոթատրոններ, նաև մարզային մի քանի կինոթատրոն միացան հայկական կինոցուցադրումների արշավին: Հայաստանի ազգային կինոկենտրոնն էլ անիմացիոն և մանկապատանեկան ֆիլմերի ցուցադրությունների շարք է սկսել, որոնք կիրականացվեն ամեն շաբաթ և կիրակի օրերին:

Հայկական կինոյի ստեղծման պատմությունը կապվում է հայ կինոռեժիսոր Համո Բեկնազարյանի հետ:

Կինոգետ, Կինոքննադատների միջազգային ֆեդերացիայի անդամ Սիրանույշ Գալստյանը կարծում է, որ հայ հանդիսատեսին անհայտ է հայկական կինոն, այնինչ շատ լավ ֆիլմեր ունենք, որոնցում հնչած արտահայտություններից շատերը թևավոր խոսք են դարձել: Կինոգետի համոզմամբ՝ ժամանակակից կինոընկալման խնդիր կա, խորհրդային ֆիլմերի հանդեպ՝ կարծրատիպային և անտեսողական վերաբերմունք: «Հայֆիլմ»-ն ունի հետաքրքիր բազմաթիվ գործեր, որոնք այսօր շատ քիչ են ներկայացվում հանրությանը:

Մեզանում «Հայ կինոյի օրը» կարող է վերածվել ոչ միայն ժամանակակից, այլև «Հայֆիլմ» ստուդիայի նկարահանած հրաշալի ֆիլմերի ցուցադրման խորհրդանշական տոնի:

Լիլիթ Ամեմյան
Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառադիոլրագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի

«Ունեցեք փոքրիկ ցանկություն, որ նվաճեք մեծ հնարավորություններ»,- ասում է Գոհար ՄԱՐՏԻԿՅԱՆԸ

Հեռուստառադիոլրագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանողների հետ հանդիպեց, իր փորձը փոխանակեց ու խորհուրդներ տվեց ապագա լրագրողներին ռադիոլրագրող Գոհար Մարտիկյանը: Նրա գլխավոր խորհուրդն էր՝ լինել ազնիվ, արդար և անկաշառ: Լրագրողի ուղիղ պարտականությունը նա համարում է իրականության բացահայտումը, իսկ խոսքով՝ ոչ թե ցավեցնել, այլ բուժել:

Գոհար Մարտիկյանը հուզմունքով խոսեց Արցախյան առաջին պատերազմում կորցրած որդու մասին, ապա իր ցավը հաղթահարելու, իր մեջ ուժ գտնելու և «Ապրելու բանաձև» հաղորդաշարի ստեղծման մասին.«Հաղորդման առաջարկը ստանալուն պես պատասխանեցի. ես ինչպե՞ս պետք է կարողանամ գրիչս թաթախել իմ արնածոր վերքի մեջ և գրել այդ պատմությունը: Եվ ստացա հետևյալ պատասխանը՝ միայն դուք կարող եք դա անել: Այս խոսքերի դեմ ես անզոր էի, համաձայնեցի: Ի՜նչ մեծ ազդեցություն ունեցան այդ խոսքերն ինձ վրա, որքան կարևոր ու ոգևորող էին»:

Դրանից հետո Գոհար Մարտիկյանը ստանձնել է շատ բարդ, բայց կարևոր այդ գործը, որը տարիներ հետո պիտի վերածվեր հանրագիտարանային նշանակության գրքի, որում նա առաջինը գրեց իր որդու՝ Աշոտի մասին: Սկզբանական շրջանում նա անդրադարձել է միայն զոհված զինվորների պատմություններին, սակայն հետագայում հասկացել է, որ պետք է նաև ողջերին մասին գրել. նրանք էլ են հերոս:

Ուսանողների հետ հանդիպման ընթացքում, բոլորի համար անակնկալ, ներս մտավ կուրսի ուսանողներից Արգիշտին, որն այժմ ծառայության մեջ է և արձակուրդի ընթացքում որոշել էր այցելել համալսարան:

Գոհար Մարտիկյանը հետաքրքրվեց, թե ի՞նչ է զգում իր հողը պաշտպանելիս:

Արգիշտին պատասխանեց. «Ոչ ոք չի կարող հասկանալ, թե ինչ եմ զգում ես: Պատերազմում ունեցել եմ կորուստներ, ու ինձ համարում եմ հայրենիքի հավերժ պաշտպան, դա իմ կյանքի սուրբ պարտականությունն է»,- նշեց Արգիշտին:

Գոհար Մարտիկյանը զրույցը եզրափակեց հորդորով.«Ունեցեք փոքրիկ ցանկություն, որ նվաճեք մեծ հնարավորություններ»:

Մանե ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառադիոլրագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի

Մաթեմատիկան և տիկնիկագործությունը՝ մեկ տեղում

«Հրաշք է, երբ մտքիդ ու ձեռքիդ շնորհիվ, քո աչքի առաջ ծնվում է տիկնիկը՝ շոշափելի հեքիաթը»,- մեզ հետ զրույցում ասաց տիկնիկագործ Արմինե Մկրտչյանը: Նա Կոտայքի մարզի Ակունք գյուղից է: Աշխատանքին զուգահեռ սովորում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մաթեմատիկայի բաժնի 3-րդ կուրսում:

36-ամյա Արմինեն ինքնուրույն է սովորել տիկնիկագործություն: Ամեն ինչ սկսվել է նրանից, երբ Արմինեի փոքրիկը խնդրել է իր համար տիկնիկ գործել և հաջող է ստացվել: Դրանից հետո հետաքրքրությունը տիկնիկների հանդեպ մեծացել է: Ըստ Արմինեի՝ տիկնիկները ոչ միայն խաղալիք են, այլև հուշանվեր, մնայուն արժեք:

«Երեք տարի է, ինչ զբաղվում եմ ձեռագործ աշխատանքով, բայց մանկուց աշխատել եմ թելերով,- պատմում է Արմինեն,-նկատել եմ, որ մեր օրերում մարդիկ դժվարանում են տարբերվող ու յուրօրինակ նվերներ գտնել, ինձ համար տիկնիկները հետաքրքիր տարբերակ են»:

Ձեռագործ տիկնիկների մեծ մասը շարժական է, ձեռքերը և ոտքերը ծալվում են, գլուխը պտտվում, անվտանգ են և պատրաստվում են հիպոալերգիկ թելերով: Ապրանքատեսակը կոչվում է «ԹեՄաՏի». Արմինեի երեք երեխաների անվան առաջին վանկերն են՝ Թևոս, Մարիամ, Տիգրան: Տիկնիկները ցուցադրվում են սոցկայքերով՝ TeMaTi Armenia handmade անվամբ:

Գաղափարի իրագործման համար մեծ դեր են ունեցել եղբոր կինը ՝ Գայանեն, որն առաջին գնորդն է եղել, և ամուսինը, որն աջակցել է ֆինանսապես: «Ամենահաճելին երեխաներին ուրախություն պարգևելն է. ծնողները զանգահարում են ու պատմում, որ երեխաներն օրերով չեն բաժանվում տիկնիկներից, նույնիսկ իրենց հետ մանկապարտեզ են տանում»,- նկատում է Արմինեն:

Ապագայում ծրագրում է բացել խանութ-սրահ, որտեղ կցուցադրվի աշխատանքների ավելի լայն տեսականի, ինչպես նաև ուզում է հիմնել խմբակ, որտեղ իր փորձը կփոխանցի երեխաներին, որպեսզի նրանք էլ ստեղծեն տիկնիկներ՝ իրենց ոճով:

«Պետք է ձգտել ավելիին, նորամուծություն մտցնել այս ասպարեզում: Տիկնիկագործությունը դարձել է ժամանակակից աշխարհի անբաժան մասը: Ծաղկեցնել է պետք այն»,- եզրափակեց Արմինեն:

Լուիզա ՍԱՐԳՍՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառադիոլրագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 26.04.2022 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ